Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՄՈՒՏՔ ԵՂԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանը 2022 թվականի ընթացքում ստացել է տեղեկություն ստանալու 41 հարցում, որից 40-ը ստացվել է էլեկտրոնային եղանակով /պաշտոնական էլեկտրոնային փոստ, պաշտոնական կայք, e-request համակարգ/ և մեկը փոստով:
2. 23 հարցում ստացվել է e-request հարթակի միջոցով:
3. Սոցիալական ցանցերի միջոցով ստացված տեղեկություն ստանալու հարցումների հաշվառում իրականացվում է, սակայն վիճակագրություն չի վարվում: 2022թ. ընթացքում սոցիալական ցանցերի միջոցով ստացվել է տեղեկություն ստանալու 96 հարցում:
4. Սոցիալական ցանցերով ստացված հարցումները հարցումների ընդհանուր վիճակագրության մեջ չեն ներառվում:
5. Մարզպետարանի կողմից 2022թ. ընթացքում մերժվել է տեղեկություն ստանալու 8 հարցում:
6. Մերժված հարցումները մերժվել են անձնական տվյալների պաշտպանության օրենքով նախատեսված և մարզպետարանի լիազորությունների շրջանակից դուրս գտնվելու հիմքերով: